



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 01 » 07 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0115-21

Ձեռնարկողը՝

«Գլոմմա» ԱԿ
Ք. Երևան, Մաշտոցի պողոտա 51, բն.30

Գործունեությունը՝

**Ազգային միջնակարգ դպրոցի նոր մասնաշենքի կառուցման
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ**
Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող



Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 0115-21

<01> 07 2021թ.

**Շիրակի մարզի Ազատանի միջնակարգ դպրոցի նոր մասնաշենքի կառուցման
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝

«Գլոմմա» ԱԿ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
/Գ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Շիրակի մարզ, Ազատան համայնք

Ներածական մա. Ներկայացվող գործունեությունը նախատեսվում է իրականացնել Շիրակի մարզի Ազատան համայնքի 48-րդ փողոցի, 24 հասցեում գործող միջնակարգ դպրոցի տարածքում, գործող մասնաշենքի հետնամասում:

Նախագծվող դպրոցի հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 0.99807 հա: Ներկայացվող գործունեության ընթացքում նոր մասնաշենքի կառուցապատման, տարածքի բարեկարգման և կանաչապատ գոտիների աշխատանքների շրջանակը կկազմի 4899մ², մասնավորապես, դպրոցի նոր մասնաշենքի (ներառյալ՝ կաթսայատունը) կառուցապատման մակերեսը կկազմի 2314մ², իսկ բարեկարգվող և կանաչապատվող տարածքը՝ 2585մ²:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործնական տեսակ:

Նկարագրական մաս. Դպրոցի նախագծման աշխատանքների համար հիմք են հանդիսացել ՀՏԶՀ-ի կողմից մշակված տեխնիկական առաջադրանքի փաստաթուղթը, ճարտարապետահատակագծային առաջադրանքը, «Հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերով (ՀՀՇՆ 31 03.01.2014) ներկայացվող պահանջները և



քաղաքաշինության ոլորտում գործող իրավական շրջանակը, դպրոցի և Ազատանի համայնքապետարանի հետ իրականացված քննարկումները:

Դպրոցի գոյություն ունեցող մասնաշենքը պահպանվելու է, նոր մասնաշենքը նախատեսվում է սեյսմիկ կարերով իրար միացվող թվով 6 մասնաշենքերից:

Նոր մասնաշենքի հատակագծային լուծումներում հաշվի են առնված միջին դպրոցի դասասենյակները, ուսումնական կաբինետները, սանհանգույցները, ճաշարանը՝ օժանդակ սենյակներով, մարզադահլիճը՝ հանդերձարաններով, հանդիսությունների դահլիճը, ինչպես նաև ռեկրեացիոն տարածքները: Մասնաշենքի գլխավոր մուտքը նախատեսվում է ներքին բակի կողմից, սակայն նախագծվող մասնաշենքի բոլոր ուղղություններով նախատեսվում են էվակուացիոն ելքեր: Գլխավոր մուտքում կլինեն նաև թեքահարթակներ և սակավաշարժ խմբերի համար նախատեսված վերելակ: Նախագծվող մասնաշենքերի տանիքները լանջավոր են, բացառությամբ՝ թիվ 5 մասնաշենքի, որի տանիքը նախագծվում է հարթ: Տանիքները կունենան կազմակերպված արտաքին ջրահեռացում, լանջավոր տանիքների ծածկույթը նախագծվում է պրոֆիլավորված գործարանային ներկված և ցինկապատ թիթեղներով, իսկ ջերամեկուսացման լուծումներում կօգտագործվի պենոպոլիստիրոլի երկշերտ ջրամեկուսիչ թաղանթ:

Նախագծվող նոր ուսումնական մասնաշենքը երեք հարկանի է: Մասնաշենքերի բոլոր պատերն արտաքինից կջերմամեկուսացվեն 90մմ հաստությամբ հանքային բամբակով, հարթ տանիքը՝ 100մմ էքստրուդացված պենոպոլիստերով շերտով: Բոլոր մասնաշենքերը նախագծվում են միաձույլ ե/բ կրող կոնստրուկցիաներով, ներառյալ՝ դպրոցի հիմքերը, սյուները, հեծանները և միջհարկային սալերը: Արտաքին պատերում նույնպես օգտագործվելու են ե/բ կոնստրուկտիվ լուծումներ:

Մասնաշենքերի արտաքին ճակատների հարդարման աշխատանքներում կօգտագործվի դեկորատիվ սվաղ և ներկման լուծումներ: Դպրոցի ներքին հարդարման լուծումներում՝ միջանցքներում և սրահներում, նախատեսվում են չսայթակող կերամոզրանիտե հատակներ, դասասենյակներում և դահլիճներում՝ վինիլային 2մմ և 4մմ հատակներ:

Նախագծով նախատեսվում է հաշմանդամություն ունեցող և սակավաշարժ խմբերի տեղաշարժն ապահովող վերելակներ՝ $m=630կգ$, և $V=1.0մ/վրկ$ պարամետրերով, թեքահարթակներ՝ արտաքին մուտքերում, ինչպես նաև հաշմանդամ երեխաների համար հարմարեցված սանհանգույցներ:

Բարեկարգման աշխատանքների շրջանակում դպրոցի տարածքում նախատեսվում է ասֆալտե ծածկույթով խաղահրապարակ և անցուղիներ: Մասնաշենքերի պարագծով նախատեսվում է նոր սալվածքի իրականացում՝ բրեկչա տիպի ծածկով: Տարածքի առջևի մասով նախատեսվում է նոր ցանկապատի կառուցում՝ ներկված մետաղական տուփածև խողովակներից:

Դպրոցի համար նախատեսվում է կառուցել $24մ^2$ մակերեսով կաթսայատուն: Կաթսայատունը նախագծվում է որպես ե/բ սյունահեծանային միահարկ կառույց, կանոնավոր տուֆի շարվածքից, իսկ պատերի արտաքին լուծումներում կօգտագործվեն 50մմ g/w

